

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ 2014-2015 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

• ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Մարզում հանրակրթական դպրոցների թիվը	-	81, որից 4-ը՝ ավագ
- Ղասարանների թիվը	-	862
- Աշակերտների թիվը	-	14830
- Ուսուցիչների թիվը	-	2119
- 2013-2014 ուս.տարում առաջին դասարանցիների թիվը	-	1553
- 2014-2015թ. ուս. տարվա սեպտեմբերին կանխատեսվում է՝ առաջին դասարանցիների թիվը	-	1481
- 2014-2015թ. ուս. տարվա սեպտեմբերին կանխատեսվում է՝ աշակերտների թիվը		14941
- 2014-2015թ. ուս. տարվա սեպտեմբերին կանխատեսվում է՝ դասարանների թիվը		868
- Նախադպրոցական հիմնարկների թիվը	-	46
- Նախադպրոցական հիմնարկների աշխատողների թիվը	-	509
- Ընդգրկված երեխաների թիվը	-	2960
- 2013-2014 ուս.տարվա նախակրթարանների թիվը	-	10
- Նախակրթարաններում ընդգրկված երեխաների թիվը	-	236
- 5-6 տարեկանների թիվը	-	143
- 2014-2015թ. ուս. տարվա նախակրթարանների թիվը	-	11
/Բազրատաշենի թիվ 2 դպրոցում գործող նախակրթարանն ընդգրկվել է <<Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում>> ենթաձրագրում/		
- Նախակրթարաններում ընդգրկված երեխաների թիվը	-	266
- 5-6 տարեկանների թիվը	-	158
- Համակարգչային դասարաններ ունեցող դպրոցների թիվը	-	77
- 2013թ վերանորոգված դպրոցների թիվը 2013թ	-	15

Տավուշի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործում է 77 հանրակրթական դպրոց , որից 23-ը՝ հիմնական է, 54-ը՝ միջնակարգ: Դպրոցներում սովորում է 14830 աշակերտ:

77 դպրոցներում կոմպլեկտավորվել է 862 դասարան , /դասարանների միջին խտությունը կազմում է 19.2 /:

2014թ. սեպտեմբերին միջին խտությունը կկազմի 19,4:

2013-2014 ուստարում ձևավորվել է 86 երկկոմպլեկտ դասարան:

Մարզի հանրակրթական դպրոցների 2013-2014 ուսումնական տարվա 9-րդ դասարանի շրջանավարտներից ավագ դպրոցներ և քոլեջներ են դիմել.

- 1.Իջևանի ավագ դպրոց - 104 աշակերտ
- 2.Դիլիջանի ավագ դպրոց – 47 աշակերտ
- 3.Նոյեմբերյանի ավագ դպրոց - 37 աշակերտ
- 4.Բերդի ավագ դպրոց - 39 աշակերտ

- 1. Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ – 75 աշակերտ
- 2.Դիլիջանի պետական քոլեջ – 58 աշակերտ
- 3.Բերդի պետական քոլեջ – 20 աշակերտ
- 4.Բերդի արհեստագործական ուսումնարան – 58 աշակերտ
- 5. Նոյեմբերյանի պետական քոլեջ – 26 աշակերտ, որից 12-ը՝ արհեստագործական հոսք

• ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Դպրոցներում աշխատող ուսուցիչների թիվը հասնում է 2119-ի,որոնց հիմնական մասն ունի բարձրագույն կրթություն: Յուրաքանչյուր տարի ատեստավորվում է ուսուցիչների թվաքանակի 1/5-ը: Ատեստավորման գործընթացին նախորդում է ուսուցիչների վերապատրաստումը, որը հիմնականում իրականացվում է կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում:

2012-2013 ուսումնական տարում հայտագրված 382 ուսուցչից 2013թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում ատեստավորվել է 348-ը: Մ/թ ամռանը կրթության ազգային ինստիտուտի Տավուշի մասնաճյուղում վերապատրաստվել է 317 ուսուցիչ, որոնց ատեստավորումը նախատեսվում է անցկացնել 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր

ամիսներին: Փաստաթղթային աստատավորումից հետո տարակարգի ստացման համար մարզից երկու ուսուցիչ դիմել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն և ՀՀ կրթության և գիտության նախարարը հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը՝ Լճակաձորի հիմնական դպրոցի Մաթեմատիկատե առարկայի ուսուցչուհի Ռուզան Ռուսլանի Մալինյանին և Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցի քիմիայի ուսուցիչ Հասմիկ Վանիկի Սմբատյանին շնորհել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

• ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈԻԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

2014թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 11-ը անցկացվել է դպրոցականների օլիմպիադաների երրորդ /մարզային/ փուլը: Մարզային փուլին մասնակցել է 278 աշակերտ, որից 82-ը մասնակցել է դպրոցականների առարկայան օլիմպիադաների հանրապետական փուլին: Մարզպետի կողմից հաստատված հանրապետական փուլի մասնակիցների հայտերը՝ բացառությամբ մաթեմատիկայի և ֆիզիկայի /մաթեմատիկայի և ֆիզիկայի օլիմպիադաներն անցկացվել են այլ ընթացակարգով/, ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Օլիմպիադայի հանրապետական փուլն անցկացվել է ս/թ մարտի 16-ից մինչև մայիսի 8-ը:

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլի մասնակիցներից 7-ն արժանացել են 3-րդ կարգի դիպլոմի, 7-ը՝ գովասանագրի, 2-ը՝ պատվոգրի: Մասնավորապես.

Իջևանի ավագ դպրոցից՝

1. Բայրամյան Արման - /9-րդ դաս. աշխարհագրություն / -3-րդ կարգի դիպլոմ
/9-րդ դաս.մաթեմատիկա / - գովասանագիր
/9-րդ դաս., հայոց լեզու/ - գովասանագիր
2. Սիմոնյան Անահիտ - /12-րդ դաս., հայ գրականություն/- գովասանագիր

Նոյեմբերյանի ավագ դպրոցից՝

1. Սարուխանյան Անի - / 11-րդ դաս., հայ գրակ./ - գովասանագիր
2. Մամյան Սերինե - / 12-րդ դաս., անգլերեն/ - գովասանագիր

Դիլիջանի ավագ դպրոցից՝

- 1.Փահլևանյան Լաուրա - / 10-րդ դաս., ռուսաց լեզու./ - 3 -րդ կարգի դիպլոմ

Գանձաքարի միջնակարգ դպրոցից՝

1. Մեկիքսերթյան Լուսինե - / 12-րդ դաս. ֆրանսերեն/- 3 -րդ կարգի դիպլոմ
2. Մատինյան Սերինե - / 12-րդ դաս. ֆրանսերեն/- 3 -րդ կարգի դիպլոմ

Արճիսի միջնակարգ դպրոցից՝

3. Մնացականյան Ռուզաննա - / 11-րդ դաս. գերմաներեն/- պատվոգիր
2. Միսկարյան Նոնա - /11-րդ դաս., հայ.գրականություն/ - 3-րդ կարգի դիպլոմ

Այրումի միջնակարգ դպրոցից՝

1. Բեջանյան Աշխեն - /9-րդ դաս., գերմաներեն/ - 3-րդ կարգի դիպլոմ
2. Բեջանյան Արարատ - /10-րդ դաս., գերմաներեն/ - 3-րդ կարգի դիպլոմ
3. Աղայան Լուսինե -/12-րդ դաս., գերմաներեն/ -պատվոգիր

Ջուջևանի միջնակարգ դպրոցից՝

1. Իսրայելյան Մարինե / 10-րդ դաս., հայ գրակ./ - գովասանագիր

Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցից՝

1. Մակյան Իսաչիկ - /12-րդ դաս., անգլերեն/ - գովասանագիր

Ս/թ մայիսի 8-ին անցկացված ռազմագիտության օլիմպիադայի հանրապետական փուլում 2-րդ տեղ է զբաղեցրել **Արծվաբերդի միջնակարգ դպրոցը:**

Ս/թ մարտին ացկացվել է շախմատի օլիմպիադայի մարզային փուլը և հաղթող է ճանաչվել Ջուջևանի միջնակարգ դպրոցի թիմը, որը մայիսին մասնակցել է շախմատի օլիմպիադայի հանրապետական փուլին:

Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ս/թ անցկացվել են սպորտլանդիաներ: Ս/թ մայիսին անցկացվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մարզային փուլը, որում հաղթող է ճանաչվել Իջևանի թիվ 1 մանկապարտեզը: Իսկ դպրոցականների սպորտլանդիաների մարզային փուլը կանցկացվի 2014թ. սեպտեմբերին:

2013թ. անցկացվել է նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը. 1-ին փուլին մասնակցել է 2020 աշակերտ, 2-րդ փուլին՝ 1460, իսկ 3-րդ փուլին՝ 72 աշակերտ: Մարզային փուլում հաղթող է ճանաչվել Արծվաբերդի միջնակարգ դպրոցը:

2014թ. սեպտեմբերին կանցկացվի մարզական փառատոն, իսկ հոկտեմբերին կանցկացվի նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը:

2013-2014 ոսումնական տարում պետական միասնական քննությունները կազմակերպվել են Իջևանի թիվ 1 և թիվ 4 հիմնական դպրոցներում.

Մարզի շրջանավարտների թիվը` - 970
Դիմորդ` - 647

Միասնական քննությունների արդյունքներն ըստ առարկաների.

Ռուսաց լեզու

Քննությանը մասնակցել է - 77 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 33-ը

Հայոց լեզու և գրականություն`

Քննությանը մասնակցել է - 382 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 34-ը

Մաթեմատիկա`

Քննությանը մասնակցել է - 221 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 33-ը

Անգլերեն լեզու`

Քննությանը մասնակցել է - 218 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 22-ը

Կենսաբանություն`

Քննությանը մասնակցել է - 67 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 22-ը

Ընդհանուր պատմություն`

Քննությանը մասնակցել է - 16 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 2-ը

Աշխարհագրություն`

Քննությանը մասնակցել է - 36 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 7-ը

Գերմաներեն լեզու`

Քննությանը մասնակցել է - 15 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 3-ը

Ֆրանսերեն լեզու`

Քննությանը մասնակցել է - 40 դիմորդ
Անբավարար գնահատական է ստացել - 6-ը

Ֆիզիկա`

Քննությանը մասնակցել է
Անբավարար գնահատական է ստացել

- 73 դիմորդ
- 22-ը

Քիմիա` հայտագրվել է

Քննությանը մասնակցել է
Անբավարար գնահատական է ստացել

- 57 դիմորդ
- 17-ը

Հայոց պատմություն`

Քննությանը մասնակցել է
Անբավարար գնահատական է ստացել

- 118 դիմորդ
- 36-ը

Տավուշի մարզից 2013 թ. պետական միասնական քննություններին մասնակցության դիմում-հայտ է ներկայացրել 647 դիմորդ: Նրանցից 484-ն ընդունվել է ՀՀ տարբեր բուհեր: Բուհ ընդունված դիմորդներից 74-ն ընդունվել է անվճար, 410-ը` վճարովի հիմունքներով:

Մասնավորապես` Տավուշի մարզից ԵՊՀ դիմած դիմորդների թիվը 158-է, որից ընդունվել է 123-ը: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ դիմած դիմորդների թիվը 262 –է, որից ընդունվել է 189-ը:

Ըստ ԳԹԿ-ի կատարած վերլուծությունների` Տավուշի մարզում առաջատարը Իջևանի կրթական տարածքն է, որի դիմորդները մարզից բոլոր քննություններին (բացի գերմաներենից) մասնակցած դիմորդների թվի ամենաբարձր տոկոսն են կազմում (32.6-100%): Գերմաներենի քննության մասնակիցների ամենաբարձր տոկոսը Դիլիջանի կրթական տարածքում է (55.6%): Ֆրանսերենի քննության բոլոր մասնակիցներն Իջևանի կրթական տարածքից են:

Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը 10%-ից ցածր է աշխարհագրության, անգլերենի, ֆրանսերենի և գերմաներենի պետական միասնական քննությունների մասնակիցների թվում: Ֆիզիկայի քննությունից այդ շեմը չի հաղթահարել մարզի դիմորդների 44.6%-ը:

Համաշխարհային պատմության, ֆիզիկայի, աշխարհագրության, ռուսաց լեզվի և գերմաներենի պետական միասնական քննություններից մարզի դիմորդները 20 միավոր չեն հավաքել: **20 միավորների ամենաբարձր տոկոսն անգլերենից է (5.7%):**

Քննական բոլոր առարկաներից Տավուշի մարզի դիմորդների հավաքած միջին միավորները ցածր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Տարբերությունը կազմում է 0.2-ից (աշխարհագրություն) մինչև 2.5 (ֆիզիկա) միավոր:

Ըստ տարածաշրջանների վերլուծության արդյունքում պարզվել է, որ հայոց լեզվի և հայ գրականության, ֆիզիկայի, աշխարհագրության, ռուսաց լեզվի և անգլերենի ամենաբարձր միջին միավորները հավաքել են Նոյեմբերյանի, հայոց պատմության, մաթեմատիկայի, քիմիայի, կենսաբանության և

գերմաներենի միջինները՝ Դիլիջանի, համաշխարհային պատմության միջինը՝ Բերդի, ֆրանսերենինը՝ Իջևանի կրթական տարածքների դիմորդները:

Ըստ սեռերի վերլուծության արդյունքում պարզվել է, որ մարզի դիմորդների հավաքած 20 միավորների գերակշիռ մասը հավաքել են աղջիկները:

Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, ֆիզիկայի, կենսաբանության և ֆրանսերենի բոլոր 20 միավորները միայն աղջիկներինն են, մաթեմատիկայինը՝ տղաներինը: Համաշխարհային պատմության, քիմիայի, աշխարհագրության, ռուսաց լեզվի

և գերմաներենի քննությունների արդյունքներում Տավուշի մարզից 20 միավոր հավաքող

դիմորդներ չկան: Ամենաշատ 20 միավորները անգլերենից են. 20 միավոր հավաքած դիմորդները կազմում են այդ քննությանը մարզից մասնակցած դիմորդների 5.7%-ը (5.3%՝

աղջիկներ, 0.4%՝ տղաներ):

- **ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶՍՅՈՒՆ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ**

2013թ-ին ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են **թվով 14 դպրոցների վերանորոգման** աշխատանքներ /Բերդավանի միջն., Իջևանի թիվ 3 հիմն., Սևքարի միջն, Տավուշի միջն, Դիլիջանի թիվ 2 հիմն, Այրումի միջն, Բերդի թիվ 4 հիմն, Գետահովիտի միջն, Իջևանի թիվ 4 հիմն, Վ.Կ.Աղբյուրի միջն, Ն.Կ.Աղբյուրի միջն, Զորականի միջն, Թեղուտի միջն, Հաղարծինի միջն. դպրոցներ/:

2014թ-ին ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են **թվով 6 դպրոցների վերանորոգման** աշխատանքներ /Բագրատաշենի թիվ 2 և Դեղձավանի հիմնական դպրոցների տանիքների վերանորոգման աշխատանքները, Մովսեսի միջն. դպրոցի կոյուղու վերանորոգումը, Կողբի թիվ 1 դպրոցի վերանորոգումը /ընթացքի մեջ է/, Բերդի թիվ 3 դպրոցի մուտքի վերանորոգումը, Ն.Ծաղկավանի միջն. դպրոցի վերանորոգումը /կավարտվի 2014թ հոկտեմբերին/, **թվով 9 դպրոցների** /Աչաջրի, Արծվաբերդի միջն, Իջևանի թիվ 5 հիմն, Կողբի թիվ 2 միջն, Ն.Կ. Աղբյուրի միջն, Գետահովիտի միջն, Ոսկեվանի միջն, Չինարիի միջն, Վ.Ծաղկավանի միջն. դպրոցներ/ **ռազմագիտության դասասենյակների վերանորոգումը:**

<<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից իրականացվել է Իջևանի թիվ 5 հիմնական դպրոցի մասնակի կահավորում: Հիմնադրամի կողմից մարզի հանրակրթական բոլոր դպրոցներին տրվել է գնդակներ:

- **ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ կառավարության 27.01.2011թ. թիվ 46-Ն որոշման համաձայն 2011թ-ից մարզի բոլոր դպրոցներն անցան ներառական կրթության համակարգի: <<Ներառական կրթության>> մուտքով աշակերտները հայտնվեցին

հասարակության ուշադրության կենտրոնում, բացի գիտելիքներ ստանալուց աշակերտը սկսեց պատկերացնել դերը հասարակական կյանքում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները դարձան իրավահավասար բոլոր երեխաների հետ, տրվեց հնարավորություն բացահայտելու իր բոլոր ունակությունները, առավել ուշադրություն դարձվեց երեխայի ուժեղ կողմերը զարգացնելուն, որի արդյունքում երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի՝ միջավայրի հետ շփումից:

Ներառական կրթությունը Տավուշի մարզի դպրոցներում դարձել է իրականություն և արդեն տվել է իր արդյունքները, ինչպես անհատական մակարդակում, այնպես էլ համայնքում՝ հաղթահարելով առկա կարծրատիպերը մարդասիրական արժեքների տարածման և ամրապնդման շնորհիվ: Ծրագրի իրագործման ընթացքում առկա են ներառման բազմաթիվ հաջողված օրինակներ.

- Մեծացել է երեխաների հաճախելիությունը
- Նվազել է երկտարեցիների թիվը
- Ստեղծվել է հանդուրժողականության մթնոլորտ յուրաքանչյուր դպրոցում:
- Տավուշի մարզում երեխաներն ապրում են իրենց ընտանիքներում և կրթություն են ստանում իրենց իսկ համայնքի դպրոցում:

<<Ներառական կրթության>> իրականացումը Տավուշի մարզում ցույց տվեց հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հասարակության լիիրավ անդամ դարձնելու անհրաժեշտությունը, որի արդյունքում շահում է ողջ հասարակությունը:

2013թ. ընթացքում Երևանի բժշկա-հոգեբանա-մանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացության հիման վրա վկայագրվել և ներառական կրթության համակարգում ընդգրկվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 117 երեխա:

Ծնողների դիմումի հիման վրա 15 երեխա տեղավորվել է Երեխայի խնամքի և պաշտպանության Դիլիջանի գիշերօթիկ հաստատությունում, 2-ը՝ <<ՍՕՍ-մանկական գյուղ>> խնամքի կենտրոնում, 1-ը՝ Խարբերդի մասնագիտացված մանկատանը, 1-ը՝ Երևանի Մարի Իզմիրյանի անվան մանկատանը: Մանկատներից 4 երեխա վերադարձել է կենսաբանական ընտանիք, իսկ երեխայի խնամքի և պաշտպանության Դիլիջանի գիշերօթիկ հաստատությունից դուրս է գրվել 6 երեխա:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության ԱԳԽ /անչափահասների գործերով խումբ/ ծառայողների կողմից սպասարկվող վարչական տարածքում անչափահասների շրջանում հանցագործությունների և իրավախախտումների դեպքերը կանխարգելելու, բացահայտելու, անչափահասների իրավական գիտելիքների իմացությունը բարձրացնելու, ինչպես նաև նրանց ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու նպատակով ս/թ հունվարի 23-ից փետրվարի 5-ն ընկած ժամանակահատվածում վարչական տարածքներում գործող հանրակրթական դպրոցներում կազմակերպվել և անցկացվել են հանդիպումներ՝ նվիրված ՀՀ բանակի 22-րդ տարեդարձին: 2013թ. մայիսի 17-ին դպրոցներում անցկացվել է <<Դասը վարում է ոստիկանը>> խորագրով դասաժամ՝ <<ՀՀ ոստիկանությունն այսօր>> թեմայով: 2013թ. սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում դպրոցներում անցկացվել է հանդիպումներ <<Անչափահասը և թմրամոլը>> թեմայով: 2013թ. նոյեմբերի 14-28-ը Իջևանի ավագ դպրոցում աշակերտների հետ անցկացվել է զրույցներ <<Աշակերտ, ոստիկան, զինվոր՝ հայրենիքին նվիրյալ>> խորագրով, իսկ 2013թ.

նույնի 15-24-ը դպրոցներում ներկայացվել են զեկույցներ <<Ընդդեմ բռնությանը>> թեմայով:

ԱԳԽ-ում հաշվառված 10 անչափահասներ ընդգրկվել են մարտական սպորտարվեստի անվճար դասընթացներում: 2013թ. ընթացքում հաշվառման մեջ գտնվող անչափահասների շրջանում անցկացվել են պրոֆիլակտիկ կանխարգելիչ և դաստիարակչական բնույթի միջոցառումներ՝ նրանց կողմից կրկնահանցագործության դեպքերը կանխելու համար:

• ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ կրթության և գիտության նախարարության և մարզպետարանների աջակցությամբ <<Անտարես>> հրատարակչության կողմից իրականացվել է <<Ընթերցանության մրցույթ 2013>> միջոցառումը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ՀՀ գրողների միության և Չարենցի տուն-թանգարանի հետ համատեղ և մարզպետարանների աջակցությամբ 2013թ. սեպտեմբեր- նոյեմբեր ամիսներին՝ կազմակերպել է ասմունքի ամենամյա՝ 11-րդ հանրապետական փառատոն՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 115- ամյակին:

ԱՊՀ Երկրների հումանիտար համագործակցության ՌԴ-ի <<Ռուստուրուդնիչեստվո>> գործակալությունը Հայաստանում ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ և մարզպետարանների աջակցությամբ 2013թ. հոկտեմբերի 15-21-ը կազմակերպել են <<Ռուսաց լեզվի օրեր>> միջոցառումների շարք հանրակրթական դպրոցներում:

Ռուսաստանի Դաշնության մամուլի և զանգվածային հաղորդակցության դաշնային գործակալությունը մարզպետարանների աջակցությամբ հանրակրթական դպրոցների 7-րդ դասարանցիների համար կազմակերպել են «Живая классика» պատանի ընթերցողների մրցույթ:

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության շրջանակում մարզպետարանների աջակցությամբ իրականացրել է «Մեր մեծերը» ծրագիրը, որի նպատակը նոր ձևավորվող սերնդի մեջ հայրենասիրություն արմատավորելն ու հայապահպանությանը նպաստելն է:

2013 թվականին «Մեր մեծերը» ծրագրում ընդգրկվել են Արշակ Չոպանյանի, Գևորգ Զ Չորեքյանի, Վիլյամ Սարոյանի, Նիկոլ Աղբալյանի անունները, ինչպես նաև Հայաստանի շախմատի հավաքականը և դպրոցներում անցկացվել են բազմաբնույթ միջոցառումներ:

Հանրակրթական դպրոցներում 2013թ. աշնանն անց են կացվել Հանրապետական ասմունքի մանկապատանեկան 5-րդ և 6-րդ մրցույթ-փառատոններ, որոնք համապատասխանաբար նվիրված են եղել հայ մեծանուն գրողներ Եղիշե Չարենցին և Սայաթ-Նովային, Համո Սահյանին և Պարույր Սևակին: <<Սասնա ծռեր>> էպոսին նվիրված ամենամյա մրցույթ-փառատոնի շրջանակներում կազմակերպվել և անց է կացվել «Ձենով Օհանես անվանակարգով վիպասանության հանրապետական մրցույթ-փառատոն: 2013թ. սեպտեմբերին Տավուշի մարզպետարանում անցկացվեց <<Սասնա ծռեր>> էպոսին նվիրված ամենամյա մրցույթ-փառատոնի մարզային փուլը: Ամենամյա մրցույթ-փառատոնը կազմակերպում է <<Սասնա տուն>> ՀԿ-ն՝ ՀՀ մշակույթի նախարարության և

մարզպետարանների աջակցությամբ: Տավուշի մարզում մրցույթին մասնակցեցին մարզի դպրոցներից 1-ի փուլը հաղթահարած 12 երեխաներ: 3-րդ և 2-րդ տեղերը 23-ական և 24-ական միավորներով համապատասխանաբար կիսեցին Չոբաթանի միջնակարգ, Նոյեմբերյանի ավագ և Բերդի թիվ 3 հիմնական դպրոցների աշակերտները, իսկ 1-ին պատվավոր տեղը գրավեց ամենափոքր մասնակիցը՝ Բերդի թիվ 3 հիմնական դպրոցի 4-րդ դասարանի սան Դավիթ Մելիքյանը: 2014թ. սեպտեմբերին կանցկացվի «Սասնա ծռեր» էպոսասացության և «Ես և էպոսը» խորագրով շարադրության մրցույթներ:

2013-2014 ուսումնական տարում հայտարարվել է նաև շարադրությունների մրցույթ հետևյալ թեմաներով՝ «Իմ ընտանիքի պատմությունը», «Բանակը մեր տունն է, մեր ամրոցը», «Հայրենիքը սկսվում է սահմանից»: Վերջին թեմաներով հայտարարված մրցույթներն առավել կարևորվում են հատկապես սահմանամերձ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների համար, նախ և առաջ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տավուշի մարզի 350 կմ ձգվող միջպետական սահմանից 300-ը սահմանակից է Ադրբեջանին և սահմանամերձ գյուղերում ապրող դպրոցականներն անմիջականորեն զգում են հակառակորդի շունչը:

2013-2014 ուսումնական տարում անցկացվել է «Ազգային հպարտություն» խորագրով մրցույթը, որի նպատակն է նպաստել դեռահասների շրջանում ազգային արժեհամակարգի զարգացմանն ու հայրենասիրական ոգու դաստիարակությանը, հայոց մշակութային ժառանգության, ազգային խորհրդանշանների արժևորմանն ու պահպանմանը: Ամփոփիչ փուլում Տավուշի մարզից լավագույնն են ճանաչվել Նոյեմբերյանի և Դիլիջանի ավագ դպրոցների աշակերտների նկարչական աշխատանքները:

Կազմակերպվել է բնագիտական առարկաները ավանդույթ դարձած «Կենդանու» մրցույթը, հաղթողները մարզում պարգևատրվել են գրենական պիտույքներով:

2014թ-ին Մեր մեծերը ծրագրում ընդգրկվել են Գալուստ Գյուլբենկյանի /145-ամյակ/, Արշիլ Գորկու /110-ամյակ/, Սիամանթոյի /136-ամյակ/, Կոմիտասի /145-ամյակ/ և Հովհաննես Թումանյանի /145-ամյակ/ անունները: 2014թ. ընթացքում կանցկացվեն միջոցառումներ Ոսկան Երևանցու 400-ամյակին, Համո Սահյանի 100-ամյակին, Հովհաննես Շիրազի 100-ամյակին, Թորոս Թորամանյանի 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներ: 2014-2015 ուսումնական տարում նախատեսվում է անցկացնել «Երգը բարեկամության կամուրջ է» խորագրով ռուսական երգի փառատոն: Փառատոնի շրջանակներում նախատեսվում է դպրոցներում հայտարարել «Ռուսաց լեզվի օր», անցկացնել ռուսաց լեզվի բաց դասեր, կազմակերպել գրական-երաժշտական կոմպոզիցիաներ նվիրված ռուս հայտնի գրողներին:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում նախատեսվում է հանդիպումներ Հայաստանի գրողների միության անդամների հետ: Նոր ուսումնական տարում նախատեսվում է անցկացնել նաև հետևյալ միջոցառումները. նվիրված՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվան, Բանակի օրվան, Մայրության և գեղեցկության տոնին, Եղեռնի գոհերի 100-ամյա տարելիցին, Հաղթանակի և խաղաղության տոնին, Հանրապետության տոնին: Ինչպես նաև նախատեսվում է անցկացնել միջոցառումներ «Իմ Հայաստան» համահայկական 2-րդ փառատոնի շրջանակներում և «Հետադարձ հայացք 100 տարի անց» խորագրով միջոցառումներ՝ նվիրված Առաջին աշխարհամարտի 100-րդ տարելիցին: Կարևորվում է նաև մարզի նշանավոր գործիչների

մեծարմանը նվիրված միջոցառումները: Միջոցառումների շրջանակներում հանրակրթական դպրոցներում կհայտարարվի նաև շարադրությունների մրցույթ, գրական-երաժշտական կոմպոզիցիաների կազմակերպում:

Մարզի հանրակրթական դպրոցներից 220 աշակերտ 2014թ. ամռան ընթացքում հանգստացել են Հանքավանի <<Լուսաբաց>> ճամբարում:

• ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2013-2014 ուսումնական տարում Իջևանի տարածաշրջանի նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակները, ինչպես նաև երաժշտության դաստիարակները մասնակցել են Կրթության ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված 30-ժամյա վերապատրաստման դասընթացներին: 2014-2015 ուսումնական տարում նախատեսվում է իրականացնել Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանների նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստման գործընթացը: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները դիտարկվում են որպես կրթության կարևորագույն օղակ և աշխատանքներ են տարվում մանկապարտեզների, այդ թվում նաև նախակրթարանների և մանկապարտեզ հաճախող երեխաների թվի ավելացման ուղղությամբ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններին բաշխվել է Կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակված մեթոդական գրականություն, մասնավորապես, <<Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում>> ուսումնական ձեռնարկը:

Արդեն 3-րդ տարին է, որ ՀՀ Տավուշի մարզն ընդգրկվել է <<Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում>> ենթածրագրում և մարզում գործող նախակրթարանների թիվն այս ուսումնական տարվա սկզբին կավելանա ևս մեկով /Բագրատաշենի թիվ 2-րդ հիմնական դպրոցն ընդգրկվել է վերոհիշյալ ծրագրում/, հնարավորության դեպքում Ոսկեպարի, Բաղանիսի միջնակարգ դպրոցները նույնպես կընդգրկվեն այդ ենթածրագրում:

• ԱՐՏԱՔԻՆ և ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հանրակրթության բարեփոխումների նոր փուլը պայմանավորված է ուսումնական հաստատությունների ներքին և արտաքին գնահատման իրականացման ուղղությամբ կառավարության որոշումների կատարման ընթացքով: ԳԹԿ-ի կողմից գրավոր աշխատանքներ են տրվել Գանձաքարի միջն, Գոշի միջն, Դիլիջանի ավագ, Վ.Անանյանի անվան թիվ 5 միջն, Թեղուտի միջն. և Հաղարծնի միջն. դպրոցների 10-րդ դասարաններում՝ հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից: Մարզի աշակերտների ցուցանիշները լավագույններից են:

ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ռուսաստանի Դաշնության <<Աջակցություն կրթությանը՝ հանուն զարգացման>> հիմնադրամի համագործակցության շրջանակներում մարզի Իջևանի թիվ 5 հիմն., Բերդի թիվ 3 հիմն. և Բերդավանի միջնակարգ դպրոցների 9-րդ դասարանի աշակերտների

շրջանում անցկացվել է թեստավորում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ուղղությամբ:

2013թ սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 31-ը Գնահատման և թեստավորման կենտրոնը մարզի 19-ը հանրակրթական դպրոցներում կատարել է ուսումնասիրություններ ստուգելու համար՝

1. ավարտական և պետական ավարտական քննությունների արձանագրությունների առկայությունը,
2. պատասխանների ձևաթղթերի գնահատականի համապատասխանությունը գրավոր աշխատանքի արդյունքի հետ,
3. դասարանների դասամատյաններում ավարտական և պետական ավարտական քննությունների գնահատականների համապատասխանությունը պատասխանների ձևաթղթերի արդյունքի հետ,
4. պատճենահանված թեստերի հիմնավորող փաստերը /աշակերտի դիմումը քննական առարկայի փոփոխության մասին, նոր աշակերտի առկայությունը/,
5. վերաքննությունների արդյունքների և արձանագրությունների ուսումնասիրություն

Ուսումնասիրությունների արդյունքում թերություններ չեն արձանագրվել:

2013 թվականին կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ)

կողմից

իրականացվել է հանրակրթական դպրոցների փորձնական վարկանիշավորում:

Միջոցարոցական ինտերակտիվ ցանցի՝ dasar.am-ի միջոցով դպրոցները վարում են էլեկտրոնային մատյաններ և արդյունավետությունը չափող էլեկտրոնային համակարգի միջոցով ամեն ամիս չափվել է ուսուցիչների կողմից կատարված աշխատանքների արդյունավետության մակարդակը: Այս համակարգը ծնողներին տալիս է ուսուցչական անձնակազմի կատարած աշխատանքներին ծանոթանալու թափանցիկ և մատչելի հնարավորություն՝ մինևույն ժամանակ մեծացնելով համակարգչային գիտելիքների նկատմամբ հետաքրքրությունը:

,Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգիտ (ԴԿՏՀ-SMIS) շահագործման հետ կապված հարաբերությունները հանրակրթական ուսումնական հաստատությունների հետ սկսվել է 2014թ. փետրվարից: ԴԿՏՀ-ն գործիք է դպրոցի անձնագրի, սովորողների, անձնակազմի, գրադարանի վերաբերյալ անձնավորված (անհատական) տեղեկատվության հավաքագրման, մշակման, պահպանման և այդ տեղեկատվության հիման վրա անհրաժեշտ վերլուծություններ և հաշվետվություններ ստանալու համար: Ըստ հանրակրթական ուսումնական հաստատություններում ,Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգիտ շահագործման կարգի նախագծի մարզպետարանները կարող են իրենց ենթակայության տակ գտնվող յուրաքանչյուր հանրակրթական ուսումնական հաստատությունների համար դիտել ամբողջական տեղեկատվություն և ստանալ վերլուծություններ և հաշվետվություններ դրանց գործունեության վերաբերյալ:

• ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

Ս/թ ապրիլի 30-ին՝ Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև հաստատված համագործակցության շրջանակներում, հերթական անգամ կազմակերպվել է <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթը՝ հինգ առարկաներից. բնագիտական / ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա/, հայոց լեզու և գրականություն, պատմություն, հայ եկեղեցու պատմություն, դասվարական առարկաներ/:

Մրցույթի մարզային փուլում հաղթող են ճանաչվել հետևյալ ուսուցիչները.

1.Մուրադյան Գոհար - հայոց լեզու և գրականություն /Բերդավանի միջն. դպրոց/

2. Ղազարյան Մարինե – դասվար / Բերդավանի միջն. դպրոց/

3.Մխիթարյան Ծովինար – ֆիզիկա /Սևքարի միջն. դպրոց/

4. Բեկնազարյան Սուրենդուխտ – հայոց պատմություն /Իջևանի թիվ 1 հիմն. դպրոց/

5.Ղալումյան Սոնա – հայոց եկեղեցու պատմություն /Իջևանի թիվ 5 հիմն. դպրոց/

Հաղթողները մասնակցել են մրցույթի հանրապետական փուլին, որի արդյունքները կամփոփվեն ս/թ սեպտեմբերին:

Իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից անցկացվող <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների մարզային փուլում հաղթող են ճանաչվել.

1.Տարվա լավագույն ուսուցիչ - Նաիրա Ղուշյան /Բերդավանի միջն. դպրոց/

2.Տարվա լավագույն տնօրեն - Հասմիկ Ամիրյան /Իջևանի վարժարան/

3. Տարվա լավագույն դաստիարակ – Ծատուրյան Հասմիկ / Բերդի թիվ 2 մանկապարտեզ/

Հանրակրթական դպրոցների տնօրենների և ուսուցիչների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներն անցկացվում են ըստ սահմանված կարգի:

Կազմակերպված է անցել նաև դպրոցականների <<Ազգային Ժողովի գավաթի>> մրցույթների տարածքային և մարզային փուլերը:

Ավարտվել է վկայականների և ատեստատների բաշխման գործընթացը: Նոր ուսումնական տարվա համար տրվել են անհրաժեշտ դասագրքերի հայտերը և արդեն դասագրքերը բաշխվում են դպրոցներին:

Առ 01.08 2014թ. կրթական ոլորտում աշխատավարձի և սոց վճարի պարտքեր չեն առաջացել, քանի որ աշխատել են խնայողության ռեժիմով:

Ներկայումս կրթական համակարգում արդիական հնչեղությունն է ստացել ուսուցիչների շրջանում սերնդափոխության հարցը: Բազմալստակ թոշակառու

ուսուցիչներին արժանի փոխարինողներ են երիտասարդ սերնդի մասնագետները, որոնք ավագ սերնդի ներկայացուցիչների կենսափորձից վերցնելով անհրաժեշտ գիտելիքներ, պետք է շարունակեն կրթական լավագույն ավանդույթները՝ դրանք անցկացնելով ժամանակակից պահանջների պրիզմայով: Մարզի կրթական համակարգում իրենց պատվավոր տեղն ունեն նաև փորձառու այն տնօրենները, ովքեր այսօր արդեն վայելում են վաստակաշատ հանգիստը և կարևոր խնդիրներում աջակցությունն են ցույց տալիս իրենց փոխարինողներին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Կ.ՆԱԶԱՐՅԱՆ